**ԱՎՏՈՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ԳՇԲՕԿ-ԳՀ ԱՊՁԲ-19/5-3**

ք.Գյումրի «27» մայիսի 2019թ.

«Գյումրու շտապ բուժական օգնության կայան» ՓԲԸ-ն ի դեմս Ռոբերտ Թորոսյանի, որը գործում է «Գյումրու շտապ բուժական օգնության կայան» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կարապետ Սարգսյանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև

տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար
իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:
2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե
Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.
2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում,
եթե՝
ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել
Գնորդի համար ընդունելի ժամկետում.
բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,
2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ
տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի
ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:
2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան
հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու
պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:
2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված
ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման
ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև
պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:
2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի
պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը
հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում,
երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված
լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:
2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո
Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով
հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով,
ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:
2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով,
ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից
ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:
2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն
էականորեն խախտել է պայմանագիրը:
2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե
բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:
2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով,
ծավալներով, ժամկետներում և հասցեով:
2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ)
ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված
ժամկետներում:
2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:
2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի
ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի
պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ
սահմանված փաստաթղթեր:
2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով
նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:
2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝
պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում
տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության
ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված
անհրաժեշտ ծախսերը:
2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3
կետերով նախատեսված տույժը և տուգանքը:
2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան
փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 483 480 (Չորս հարյուր ութսուներեք հազար չորս հարյուր ութսուն)ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 8.15 կետում նշված համաձայնագրին կից վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման

---

[1]Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից այն ստորագրելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

---

*[2]Տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը[3] ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի

---

[3] Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը կիրառելի չէ:

փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելու հաջորդող օրվանից:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է _էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3և N 3.1 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| --- | --- |
| «Գյումրու շտապբուժօգնության կայան» ՓԲԸ | <Արևշատի Սարգիս>>ՍՊԸ |
| ք.Գյումրի, Մազմանյան 3բ | ՔԱրթիկՏուֆագործների 39ա |
| հեռ. /0312/ 52512 | ՀՎՀՀ 05525309 |
| ՀՎՀՀ 05500411 | ԱրդշինբանկՓԲԸԱրթիկմ/ճ |
| «Հայբիզնեսբանկ»ՓԲԸ | Հ/Հ 2470401307720010 |
| Հ/Հ 1150012424410100 | |
| Տնօրեն՝ Ռ.Թորոսյան | Տնօրեն՝ Կ. Սարգսյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
27.05 2019թ. կնքված
ԳՇՐՕԿ-ԳՀԱՊՁԲ-19/5-3 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը եւ ապրանքային նշանը | արտադրողի անվանումը եւ ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | Մատակարարում | | |
| | | | | | | | | | Հասցե | քանակ | Ժամկետ |
| 1 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի սալոնի դռան փականի բռնիչ | Թուրքիա | Սալոնի դռան փականի բռնիչ Մատակարարվող պահեստամասերը պետք է լինեն եվրոպական կամ համարժեք որակի արտադրության | հատ | 3600 | 10800 | 3 | ք.Գյումրի Մազմանյան 3բ | 3 | 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում մինչև 15.12.2019 թ. |
| 2 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի հետևի դռան փականի բռնիչ | Թուրքիա | ավտոմեքենայի հետևի դռան փականի բռնիչը Մատակարարվող պահեստամասերը պետք է լինեն եվրոպական կամ համարժեք որակի արտադրության | հատ | 4800 | 9600 | 2 | ք.Գյումրի Մազմանյան 3բ | 2 | 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում մինչև 15.12.2019 թ. |
| 3 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ սալոնի դռան փականի ներսային բռնակ | Թուրքիա | սալոնի դռան փականի ներսային բռնակ Մատակարարվող պահեստամասերը պետք է լինեն եվրոպական կամ համարժեք որակի արտադրության | հատ | 3600 | 10800 | 3 | ք.Գյումրի Մազմանյան 3բ | 3 | 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում մինչև 15.12.2019 թ. |
| 5 | 34321121 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի յուղի զտիչ | Թուրքիա | յուղի զտիչ` Երջանցող փական: 0.8 Ստուգիչ փական: 1.0 Մատակարարվող պահեստամասերը պետք է լինին եվրոպական կամ համարժեք որակի արտադրության | հատ | 1920 | 42240 | 22 | ք.Գյումրի Մազմանյան 3բ | 22 | 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում մինչև 15.12.2019 թ. |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի առջևի դռների ապակու ամբարձիչ | Թուրքիա | ավտոմեքենայի առջևի դռների ապակու ամբարձիչ հավաքովի լրակազմ միանգամից տեղադրվող<br><br>Մատակարարվող պահեստամասերը պետք է լինի եվրոպական կամ նմանատիպ որակի արտադրության | լրակազմ | 33000 | 33000 | 1 | ք.Գյումրի Մազմանյան 3բ | 1 | 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում մինչև 15.12.2019 թ. |
| 15 | 34631140 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի անվադող ձմեռային 215x75 R16C | Թուրքիա | դիամետր՝ R16<br>լայնությունը՝ 215<br>պրոֆիլ՝ 75%<br>Ավտոմեքենատեսակը բեռնատար տեսակը<br>Ձմեռային եղանակի համար <C><br>արագության ցուցանիշը՝մինչև 140 կմ/ժ<br>Բեռի ինդեքսը 116/114 | հատ | 39000 | 312000 | 8 | ք.Գյումրի Մազմանյան 3բ | 8 | 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում մինչև 15.12.2019 թ. |
| 38 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի թարթիչի լամպ | Թուրքիա | ավտոմեքենայի թարթիչի լամպ12V24W | հատ | 120 | 2400 | 20 | ք.Գյումրի Մազմանյան 3բ | 20 | 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում մինչև 15.12.2019 թ. |
| 39 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի պետհամարանիշի լամպ | Թուրքիա | պետհամարանիշի լամպ սպիտակ | հատ | 120 | 1440 | 12 | ք.Գյումրի Մազմանյան 3բ | 12 | 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում մինչև 15.12.2019 թ. |
| 50 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի անվափուց R16 | Թուրքիա | ավտոմեքենայի անվափուց R16 | հատ | 3600 | 21600 | 6 | ք.Գյումրի Մազմանյան 3բ | 6 | 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում մինչև 15.12.2019 թ. |
| 51 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի կարդանի խաչուկների հավաքածու/8.24/ | Թուրքիա | խաչուկների հավաքածու 8 մմ 24 մմ<br>Մատակարարվող պահեստամասերը պետք է լինի եվրոպական կամ նմանատիպ որակի արտադրության | հատ | 3600 | 28800 | 8 | ք.Գյումրի Մազմանյան 3բ | 8 | 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում մինչև 15.12.2019 թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 62 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի առջևի աջ դռան փականի բռնակ | Թուրքիա | ավտոմեքենայի առջևի աջ դռան փականի բռնակը նախատեսված է պետք է լինի Մատակարարվող պահեստամասերը պետք է լինեն եվրոպական կամ նմանատիպորակի արտադրության: | հատ | 3600 | 10800 | 3 | ք.Գյումրի Մազմանյան 3բ | 3 | 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում մինչև 15.12.2019 թ. |

բոլոր պահեստամասերը պետք է նախատեսված լինեն
ՖորդՏրանզիտմակնիշի 2011 թվականի արտադրության ավտոմեքենայի համար
բենզինային շարժիչ` -2.3լ
Շարժիչի հզորությունը-` 88.3/120ԿՎՏ/ձ.ուժ
բեռնվածության առավելագույն զանգվածը` 3500կգ
Զանգվածը առանց բեռնվածության` 2200կգ

| | |
|---|---|
| ԳՆՈՐԴ<br>«Գյումրու շտապ բուժօգնության կայան» ՓԲԸ<br>ք.Գյումրի, Մազմանյան 3բ<br>հեռ. /0312/ 52512<br>ՀՎՀՀ 05500411<br>«Հայբիզնեսբանկ»ՓԲԸ<br>Հ/Հ 1150012424410100<br>Տնօրեն` Ռ.Թորոսյան<br>-----------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | ՎԱՃԱՌՈՂ<br><Արևշատ Սարգիս>> ՍՊԸ<br>Ք Արթիկ Տուֆագործների 39ա<br>ՀՎՀՀ 05525309<br>Արդշինբանկ ՓԲԸ Արթիկ մ/ճ<br>Հ/Հ 2470401307720010<br>Տնօրեն` Կ. Սարգսյան<br>-----------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |

Հավելված N 2
27.05.2019թ. կնքված
ԳՇՐՕԿ-ԳՀԱՊՁԲ-19/5-13 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 38*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի սալոնի դռան փականի բռնիչ | | | | | 3240 | 4320 | 5400 | 6480 | 7560 | 8640 | 9720 | 10800 | 10800 |
| 2 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի հետևի դռան փականի բռնիչ | | | | | 2880 | 3840 | 4800 | 5760 | 6720 | 7680 | 8640 | 9600 | 9600 |
| 3 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ սալոնի դռան փականի ներսային բռնակ | | | | | 3240 | 4320 | 5400 | 6480 | 7560 | 8640 | 9720 | 10800 | 10800 |
| 5 | 34321121 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի յուղի զտիչ | | | | | 12672 | 16896 | 21120 | 25344 | 29568 | 33792 | 38016 | 42240 | 42240 |
| 8 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի առջևի դռների ապակու ամբարձիչ | | | | | 9900 | 13200 | 16500 | 19800 | 23100 | 26400 | 29700 | 33000 | 33000 |
| 15 | 34631140 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի անվադող ձմեռային 215x75 R16C | | | | | 93600 | 124800 | 156000 | 187200 | 218400 | 249600 | 280800 | 312000 | 312000 |
| 38 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայ | | | | | 720 | 960 | 1200 | 1440 | 1680 | 1920 | 2160 | 2400 | 2400 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ի թարթիչի լամպ | | | | | | | | | | | | | |
| 39 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի պետհամարանիշի լամպ | | | | | 432 | 576 | 720 | 864 | 1008 | 1152 | 1296 | 1440 | 1440 |
| 50 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի անվադողեր R16 | | | | | 6480 | 8640 | 10800 | 12960 | 15120 | 17280 | 19440 | 21600 | 21600 |
| 51 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի կարդանի խաչուկների հավաքածու /8.24/ | | | | | 8640 | 11520 | 14400 | 17280 | 20160 | 23040 | 25920 | 28800 | 28800 |
| 62 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի առջևի աջ դռան փականի բռնակ | | | | | 3240 | 4320 | 5400 | 6480 | 7560 | 8640 | 9720 | 10800 | 10800 |

* Վճարման ենթակա գումարները կայացվում են աճողական կարգով: Սույն ժամանակացույցը բացվում մկնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվել ու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս

ԳՆՈՐԴ
«Գյումրու շտապ բուժօգնության կայան» ՓԲԸ
ք.Գյումրի, Մազմանյան 3բ
հեռ. /0312/ 52512
ՀՎՀՀ 05500411
«Հայբիզնեսբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1150012424410100
Տնօրեն՝ Ռ.Թորոսյան
------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
<Արևշատ Սարգիս>> ՍՊԸ
Ք Արթիկ Տուֆագործների 39ա
ՀՎՀՀ 05525309
Արդշինբանկ ՓԲԸ Արթիկ մ/ճ
Հ/Հ 2470401307720010
Տնօրեն Կ. Սարգսյան
------------------------
/ստորագրություն/
Կ.Տ